ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«6» Դեկտեմբեր 2023 թվականի N: 536-Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 17-ի N:1765-Ն որոշման և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված թվով 19 ընտանիքներին վառելիքով ապահովելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 0-25/1065-2023 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 1212 «Տարածքային զարգացում» ծրագրի 12030 «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների տրամադրում» միջոցառմամբ Շիրակի մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցություն կազմակերպելու նպատակով Ամասիա համայնքի ղեկավարի խորհրդական Արթուր Լյովայի Մկրտումյանին /նույնականացման քարտ՝ 004996252, տրված 04.07.2014թ. 021/ հատկացնել 2,160.000 /երկու միլիոն հարյուր վաթսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը և տասնհինգօրյա ժամկետում ֆինանսական միջոցների ծախսը հավաստող հաշվետվության ներկայացումը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է